



Մայրիկս ծովանոյշ մըն է

Հեղինակ
Զէյնէպ Ալփասլան

Նկարագարդեց՝
Պիկէ Տօղու

Թարգմանեց՝
Նաթալի Պաղտատ

Խմբագրեց՝
Սարին Ազպաշ

Էջադրեց՝
Մելիսա Արսէնեան

Հոկտեմբեր 2023, Իսթանպուլ

© 2023, Hippo
ISBN 9786057123152

Հիփփօ Գիրք

İstiklal Caddesi Hıdivyal Palas No: 231 Kat 1

34430 Tünel, Beyoğlu-İstanbul

Tel: (0212) 252 65 18 - 243 06 02

info@hippokitap.com www.hippokitap.com

Sertifika No: 44967

«Հիփփօ»ն «Արաս» հրատարակչության ձեռնարկն է:

Տպագրութիւն՝

Sena Ofset

2. Matbaacılar Sitesi 4NB7-9-11 Topkapı-İstanbul

Tel: (0212) 613 38 46 / Sertifika No: 45030

ՉԷՅՆԵՊ ԱԼՓԱՍԼԱՆ

Տալիսի
Տոմսերից Լին է

ՆԿԱՐԱԶԱՐԴԵՑ՝ ՊԻԿԵ ՏՕՂՈՒ
ԹԱՐԳՄԱՆԵՑ՝ ՆԱԹԱԼԻ ՊԱՂՏՍՏ

Ուրիշ աշխարհ մը

Կրկեսները տարօրինակ վայրեր են: Անշուշտ որ խօսքս այդ սարսափելի կրկեսներուն մասին չէ, ուր կենդանիները ստրկութեան տակ են: Մերինին պէս՝ կախարդական կրկեսներուն մասին կը խօսիմ: Ներս մտնելնուդ պէս՝ կը հասկնաք, որ ուրիշ աշխարհ մը քայլ նետած էք: Աղի պիստակին եւ բամպակ շաքարին հոտը, գարնանային զեփինոյի մը պէս կը փաթթէ ձեզ: Կրկեսին չորս կողմէն լսուող երաժշտութիւնը ձեր միտքերը կը խառնէ, կոնի մէջ տապկուած գետնախնձոր եւ չոր պտուղ ծախող երեխաները ձեր ամէն մէկ քայլին կը հետեւին: Մինչդեռ դուք երբեք չէք կրնար վստահ ըլլալ, թէ այդ սարսափի փապուղիին համար տոմսակ մը գնելու քաջութիւնը ունի՞ք, թէ՛ ոչ:


Երբ իրիկունը կ'իջնէ եւ մայրամուտը դեղծի գոյնի կը ներկէ երկինքը, հազարաւոր պզտիկ լամբեր կը սկսին միասնաբար վառիլ ու մարիլ: Իրենց ծնողներուն ձեռքերը ձգելով բազմութեան մէջ կորսուած երեխաներուն հեծկտութիւնը, կախարդական հայելիներուն դիմաց իրենց ցոլացումին խնդացողներուն քահքահին կը խառնուի: Հսկայ անիւր քանի մը երկվայրկեան կենալով կը վախցնէ նստողները, յետոյ կրկին դառնալու կը սկսի: Թերթերու տխուր լուրերը տեղ չունին հոս: Տեղ չունին նաեւ

պատերազմները, թշուառությունը, գողությունը, անարդարությունը: Այս աշխարհը իր կանոնները ունի եւ ամէն տեսակ չարութիւն դուրսը կը մնայ: Գոնէ դուրսէն այդպէս կ'երեւի:

Ինծի պէս կրկէսին մէջ մեծցած երեխաները լաւ գիտեն այս աշխարհը: Բայց երբ այս աշխարհին դուրսը մնացող աշխարհը, այսինքն՝ ոմանց կողմէ «իրական աշխարհ» կոչուող այդ տեղը կը մտնեն, քիչ մը կը շուարին: Եթէ կրկէսի մը մէջ մեծցած էք, դպրոցը ամէն մարդ ձեզի տարօրինակ նայուածք մը կը նետէ եւ երբ ձեր կոնակը դարձնէք, ծաղրելի անուններ կու տայ ձեզի:

Մինչդեռ ես, դպրոցէն ետք վազնիվազ կրկէս կ'երթամ եւ երբ վստահ ըլլամ, որ շուրջս մէկը չկայ, Գորտիկ Տղուն վրանը կը մտնեմ: Անշուշտ որ Գորտիկ Տղան իրական գորտիկ տղայ մը չէ: Իրականութեան մէջ, կրկէսին մէջ ձեր տեսածներուն ոչ մէկը իրական է: Նորէն ալ, տարօրինակօրէն կըրկէսը ինծի համար աւելի իրական է, քան՝ իրական աշխարհը: Կը հասկնաք, թէ ինչ ըսել կ'ուզեմ, չէ՞:

Գորտիկ Տղան սովորական, գիրուկ մանչ մըն է, որ շատ լաւ կը կապկէ գորտը եւ թեթեւ շպարով մը հսկայ գորտի մը կը նմանի: Անունը Մաթթի է, պիստակի հանդէպ գերզգայնութիւն ունի եւ աղաւնիներէն շատ կը վախնայ: Զայն տեսնելու համար պէտք է հինգ ոսկի վճարել եւ վարդագոյն տոմսակ մը գնել: Մաթթին



իմ միակ եւ ամենէն լաւ ընկերս է: Դպրոց չ'երթար, տունը՝ այսինքն իր կարաւանին մէջ ուսում կ'առնէ: Այս պատճառով, միայն գիշերները կրնամ տեսնել զայն: Գիշերը, երբ աստղերը կը յայտնուին ու այցելւոներուն մեկնումի ժամը կը հասնի, Մաթթին իր վրանէն կ'ելլէ եւ ինծի հետ քանի մը վայրկեան սարսափի փապուղիին դիմացի բարձր պատին վրան կը նստի: Այս քանի մը վայրկեանը, օրուան ամենէն աղուոր պահերն են ինծի համար:

Այդ բարձր կէտէն կրկէսը դիտելով, կեանքի մասին կը խօսինք: Երբ վրանները կը գոցուին, գետին նետուած պիստակի կեղեւները եւ տոմսակները կ'ալլուին եւ սեղանները մոմլաթերով կը ծածկուին,



մենք ցած ձայնով կը զրուցենք իրարու հարցնելով, թե երբ մեծնանք ինչ ըլլալ կ'ուզենք:

Մաթթին միշտ կ'ըսէ, որ երբ մեծնայ, շրջուն կրկէս մը հիմնել կ'ուզէ: Խոշոր կարաւան մը գնելով, զայն կրկէսի պիտի վերածէ եղեր: Յետոյ ալ կարաւանով աշխարհը պիտի պտտի ու աշխարհի չորս ծագերուն նաւահանգիստ քաղաքներու մէջ երեխաներու համար ներկայացումներ պիտի ընէ եղեր: Իսկ ես անոր կ'ըսեմ, որ երբ մեծնամ, երգիչ մը ըլլալ կ'ուզեմ: Բայց կրկէսի մը մէջ չէ: Երբեք կրկէսի մը մէջ չէ: «Երբ մեծնամ Փարիզի կամ Նիւ Եորքի պէս փայլփլուն քաղաքներու մէջ պիտի երգեմ», կ'ըսեմ անոր: «Մէյ մըն ալ երբեք պիտի չվերադառնամ»:

Ասոր վրայ, Մաթթին կը տխրի: Կը նեղուի ինձմէ, քանի որ ես անոր չափ չեմ կապուած կրկէսին ու անհամբեր եմ հոսկէ ազատելու: Շաբթու վերջերը մարդոց մէջ կը շրջիմ եւ կրկէսի յուշանուէրներ կը ծախեմ՝ զարդասեղներ, հտպիտի պզտիկ արձաններ, կերպընկալէ օձեր, բամպակ շաքարներ եւ վրան Գորտիկ Տղուն պատկերով շապիկներ: Մաթթին գիտէ, թէ որքան կ'ուզեմ ինձմէ շապիկ կամ շաքար գնող այդ «սովորական» երեխաներուն տեղը ըլլալ: Ասով հանդերձ, միշտ կ'ըսէ, որ մենք անոնցմէ աւելի լաւ ենք: Յետոյ ես երգ մը կ'երգեմ եւ Մաթթին դարձեալ կը ժպտի:

Բայց ես ինչո՞ւ ձեզի Գորտիկ Տղուն՝ Մաթթին մասին կը պատմեմ: Մինչդէռ իմ մասիս պէտք է

պատմեմ, քանի որ այս պատմութեան գլխաւոր կերպարը էն եմ: Այո՛, ինչի՛ մասին կը խօսէի...:

Անունս Փէփա է: Տասներկու տարեկան եմ: Բամպակ Շաքար գիւղաքաղաքը կ'ապրիմ եւ Բամպակ Շաքար կրկէսին մէջ կ'աշխատիմ: Բայց հիմակուրնէ ըսեմ, այստեղը այդ գէշ կրկէսներէն չէ, ուր կենդանիներուն տեսակ տեսակ խաղեր ընել կու տան: Կարծեմ ըսած էի, որ չեմ սիրեր այդպիսի տեղերը: Հոս միայն մարդիկ կ'աշխատին: Կ'ուզեմ ձեզի պատմել իմ, ընտանիքիս, ամենէն մտերիմ ընկերոջս՝ Մաթթիին եւ նաեւ կրկէսի բնակիչներուն պատմութիւնը:

Ասիկա տարօրինակ պատմութիւն մը պիտի ըլլայ: Զարմանալի բաներով լեցուն, դժուար հաւատալի պատմութիւն մը պիտի ըլլայ: Բախտագուշակներ, օձեր, լարախաղացներ եւ հտպիտներ պիտի ըլլան այս պատմութեան մէջ: Գիտէ՞ք, մեր կրկէսին մէջ տրապիզին վրան պարողները երբ ինքզինքնին վար ձգեն, գիտեն որ իրենց տակը ցանց մը քաշուած է ու այսպէսով ապահով կը զգան: Մինչդեռ այս պատմութիւնը կարդալու ընթացքին, ձեր տակը ցանց մը քաշուած պիտի չըլլայ:

Պատրաստ էք պատմութիւնս լսելու: Ուրեմն, խորունկ շունչ մը քաշեցէ՛ք եւ ինքզինքնիդ ազատ ձգեցէ՛ք: Ինծի վստահեցէ՛ք. պիտի բռնեմ ձեզ:

Մայրիկա ծովանոյշ մըն էր

Մայրիկա ծովանոյշ մըն էր: Այսինքն, անշուշտ ըսել չեմ ուզեր, թէ մայրիկա իրական ծովանոյշ մըն էր: Դժբախտաբար ծովանոյշները գոյութիւն չունին եւ ձեզի արդէն ըսած էի, որ կրկէսներուն մէջ ոչ մէկ բան իրական է:

Մայրիկիս գործը, Բամպակ Շաքար կրկէսին մէջ կարմիր ճերմակ գիծերով պզտիկ վրանի մը տակ, ձկնարանի մը մէջ կենալ եւ զինքը տեսնելու համար տոմսակ գնող այցելուներուն խորհրդաւոր եւ տխուր կերպով ժպտիլ էր:

Մայրիկս՝ Փինան, ամէն առտու երբ վրանը կը մտնէր, արծաթագոյն թեփերով զարդարուած սքանչելի պոչիկի մը մէջ ինքզինքը կը զետեղէր ու մինչեւ մէջքը հասնող սեփսեւ, ալեծածան մազերը ծովաստղի ձեւ ունեցող շինծու գոհարեղէններով կը զարդարէր: Այլեւս Փինա ըլլալէ կը դադրէր եւ ծովանոյշ Լուսմիլայի կը վերածուէր:

Երբ կը պատրաստուէր, շատ կը սիրէի զայն դիտել: Կը մտածէի, որ աշխարհի վրայ անկէ աւելի գեղեցիկ կին մը չկար ու ապագային անոր չափ գեղեցիկ ըլլալ կ'երագէի:

Բայց իրականութեան մէջ, կարճուկ մազերովս, մանչու պէս քալուածքովս, վիրաւոր արմուկներովս

եւ չեմ գիտեր ինչո՞ւ, միշտ ցեխոտ կօշիկներովս շատ հեռու էի ծովանոյշ Լուտմիլլա ըլլալէ:

Մայրիկս իր զգեստը հագնելէն եւ պատրաստելէն ետք, սենեակի տաքութեամբ ջուրով լեցուն, շինծու բուստերով եւ ոստրէներու խեցիներով զարդարուած երկու մեթր երկարութեամբ ձկնարանին մէջը կը մտնէր ու կրկէսը լեցնող այցելուներուն ներկայացուելու կը սպասէր: Ներկայացնելու գործը միշտ կ'ընէր չափազանց սուր ձայնով, երեսին վրայ պիսակներ ունեցող տղայ մը, որուն կեղծանունը «Սոխակ» էր:

«Եկէք, եկէք», կը ձայնէր Սոխակը: «Եկէք եւ տեսէք Ծովանոյշ Լուտմիլլան, որ անհուն ծովերու մէջ բռնուած է: Եկէք: Եկէք եւ տեսէք ստրկութեան տակ ապրող աշխարհի ութերորդ հրաշալիքը»:

Ասոր վրայ, իրական ծովանոյշ մը տեսնել փափաքող եւ կամ պարզապէս խնդալ ուզող մարդիկ, տասը ոսկի տալով տոմսակ մը կը գնէին եւ ուլունքներով շինուած վարագոյրը կէս մը բանալով ներս կը մտնէին: Մայրիկս ջուրին տակը իր շունչը շատ երկար կրնար պահել, եւ ձկնարանին մէջ իսկապէս ստրկութեան տակ ապրող ծովանոյշի մը պէս նայիլը տեսնելով՝ մարդիկ շատ կ'ազդուէին:

Կրկէսին մէջ լուսանկարելը արգիլուած էր: Այցելուները պարտաւոր էին Սոխակին ծախսած Լուտմիլլայի բացիկներէն գնելու:

Սոխակը այս բացիկներէն զատ, Լուտմիլլային նմանող պճրլիկ պուպրիկներ եւ Լուտմիլլային գո-



հարեղէններէն կը ծախէր: Պզտիկ աղջիկները այս երկար մազերով, անուշիկ ծովանոյշի պուարիկներէն կամ ծովաստղի ձեւ ունեցող աման ծամակալներէն առնելու համար իրարու հետ կը մրցէին:

Ինծի տարեկից «սովորական» աղջկան մը, ձեռքը Լուսմիլլայի պուարիկով կրկեսին մէջ աչքէ հեռանալը դիտել, զիս կը տխրեցնէր եւ նախանձ կը պատճառէր ինծի: Չէի գիտեր ինչո՞ւ: Թերեւս ալ կ'ուզէի, որ մայրիկս միմիայն ինծի պատկանէր: Բայց մէկ բան լաւ գիտէի. բնաւ չէի ակործեր այս կացութենէն:

Ձիս տխրեցնող բան մը եւս կար՝ ստրկութեան տակ գտնուող ծովանոյշին մասին Սոխակին արտայայտուելու ձեւը: Ըստ իս, անխղճութիւն էր ասիկա: Շատ լաւ գիտէի, որ Լուսմիլլան իրական չէր, սակայն ասով հանդերձ, երբեմն զայն կը տեսնէի իբրեւ մայրիկէս բոլորովին զատ մէկը եւ կրկեսին մէջ իսկապէս գերի ըլլալը մտածել սիրտս կը ցաւցընէր:

Արդեօք ինքզինքը ստրկութեան տակ զգացողը ե՞ս էի: Վերջ ի վերջոյ անընդհատ դպրոցին կամ կրկեսին մէջ դիմացս ելլող այդ «սովորական» աղջիկներէն մէկը ըլլալու համար կրնայի ամէն բան ընել:

Սովորական աղջիկի մը պէս, սովորական տան մը մէջ ապրիլ, սովորական մայրիկ մը, սովորական հայրիկ մը, սովորական քոյրիկ մը ունենալ եւ օրերս միւս աղջիկներուն պէս դասերուս մասին

գանգատելով, հեռաձայնի վրայ բամբասելով, սովորական ընկերներու հետ չմշկելով կամ *փիցցա* ուտելով անցընել կ'ուզէի:

Այդ աղջիկները չէին գիտեր, թէ որքան բախտաւոր էին: Իրենց ծնողները կամ ուսուցիչներ, կամ բժիշկներ, կամ ճարտարագէտներ, կամ ալ դրամատան պաշտօնեաներ էին: Այդ աղջիկներէն ոչ մէկը գիտէր, թէ ինչ կը նշանակէր կրկէսի մը տարօրինակ բնակիչներուն ձեռքը մեծնալ: Սովորական գործեր ունեցող, սովորական ծնողներու յարգը չէին գիտեր: Միմիայն իրենց կեանքերէն դժգոհիլ գիտէին:

Քոյրիկիս՝ Փիային ըսածին համաձայն, մեր մայրիկը ժամանակին այսպէս չէ եղեր: Ժամանակին՝ այսինքն երբ ես շատ պզտիկ էի եւ մայրիկս դեռ Լուսմիլլա չէր եղած:

Այդ տարիներուն, հայրիկս իբրեւ Հերակլէս՝ աշխարհի ամենէն ուժով մարդը, կրկէսին մէջ ծանրութիւն կը վերցնէ, մայրիկս ալ կրկէսին մուտքը տոմսակ ծախելով զարդասեղ կը բաժնէ եղեր: Օր մըն ալ Ծովանոյշ Լուսմիլլայի դերասանուհիին, շարժանկարի մը մէջ գլխաւոր դեր մը առաջարկուեր է: Ան ալ անմիջապէս լքեր է կրկէսը: Ասոր վրայ, ինչպէս դուք ալ կռահեցիք, գործատէրը այս գործը բացառիկ գեղեցկութիւն մը ունեցող մայրիկիս առաջարկեր է:

Առաջին օրերուն մայրիկս բնաւ չէ ախորժեր Լուսմիլլա ըլլալէ: Ամբողջ օրը ձկնարանի մը մէջ

բանտարկուած ըլլալը զինք տխրեցուցեր է եւ ժամերով ջուրին մէջ մնալէն մորթը ճմուռ-ճմուռ եղեր է: Բայց առաջարկն ալ չէ մերժեր, քանի որ շատ կ'ուզէ եղեր կրկէսին մէջ աշխատիլ:

Սակայն ժամանակի ընթացքին շատ վարժուեր է իր դերին եւ կարծեր է, որ սիրտին մէջ ծովուն երգը լսեր է: Այն ատեն, մայրիկս սկսեր է հաւատալ, որ Լուտմիլլա ըլլալը իր ճակատագիրն է:

Մայրիկս՝ Փինան, հետզհետէ իր դերը իւրացնելով, սկսեր է շուրջիններուն յաճախ ծովերու, նաւաստիներու, բուստերով լեցուն կղզիներու եւ ուրաւական շոգենաւերու մասին պատմել: Կեանքին մէջ երբեք ծով չբացուելով հանդերձ, բոլոր այս պատմութիւնները այնպէս մը կը պատմէ եղեր, որ կարծես իրապէս ապրեր է:

Յանկարծ ովկիանոսի չափ գոց կապոյտ շուք մը յայտնուեր ու վերջնականօրէն իր աչքերուն մէջ տեղաւորուեր է: Սկսեր է այնպէս մը վարուիլ, որ կարծես թէ իրապէս ծովէ մը բռնուած եւ հոս բերած ծովանոյշ մըն է: Ծովանոյշ Լուտմիլլան այլեւս Փինայէն աւելի իրական է եղեր:

Ահաւասիկ այսպէս ճանչցայ մայրիկս՝ աչքերուն մէջ ովկիանոսի չափ մութ շուքով մը հեռուները դիտող, երազկոտ եւ մտածկոտ կին մըն էր ու հայրիկս ամէն առտու կրկին կը սիրահարուէր անոր:

Չեմ ուզեր ըսել, որ մայրիկս կը հաւատար, թէ ինքը իսկապէս ծովանոյշ մըն էր: Ո՛չ, մայրիկս բաւական խելացի էր: Բայց գիտեմ, որ Լուտմիլլային

շնորհիւ իր մէջը հեռաւոր ծովերու հանդէպ մեծ կարօտ մը արթնցած էր:

Երբեմն կը վախնայի, որ մեզ պիտի ձգէ ու երթայ, շունչս կը կտրուէր կարծես: Կէս գիշերին անկողինէս դուրս ցատկելով, ծնողքիս սենեակը կը մտնէի ու անոնց քովը պառկելով, մայրիկիս պինդ կը փաթթուէի: Ամէն անգամ մայրիկս իր անուշիկ խօսքերովը կը յաջողէր զիս հանդարտեցնել:

Յետոյ հայրիկս մէկ ձեռքովը դիւրութեամբ զիս կը վերցնէր, կարծես թէ փետուրի մը չափ թեթեւ էի: Մինչեւ որ գլուխս դառնար, զիս օդին մէջ կը դարձնէր եւ մինչեւ քեքելելով խնդալու սկսիլս, վարչէր իջեցնէր զիս:

Կարծեմ հայրիկս ամէն տեսակ դժուարութեան դէմ նոյն լուծումը գտած էր՝ խնդալիք բաներ ընել եւ յետոյ առօրեան շարունակել, կարծես թէ բան մը չէ պատահած: Եթէ կը խնդայինք, ուրեմն որեւէ խնդիր չէր կրնար ըլլալ: Ասիկա կրկեսին կանոններէն մէկն էր: Մինչդեռ տունը կրկէս չէր եւ կրկէսն ալ տուն չէր: Հայրիկս պէտք է գիտնար ասիկա:

Կը տեսնէի, թէ կրկէսը որքան կը յոգնեցնէր հայրիկս, բայց միեւնոյն ժամանակ կը տեսնէի, թէ ինքը որքան կը սիրէր կրկէսը: Ասիկա սիրտս կը ցաւցնէր: Հայրիկս՝ Մարիոն, օրուան ընթացքին կրկէսին մէջ կը ներկայանար իբրեւ Հերակլէս՝ աշխարհի ամենէն ուժով մարդը եւ այցելուներուն աչքին առջեւը աւագով լեցուն պարկերը, երբեմն ալ ամենէն գիրուկ դիտողները կը շալկէր:

Հայրիկս՝ Մարիօն յաճախ մէջքի ցաւէն կը գանգատէր: Թէեւ գործատէրը անցեալ տարի ի վերջոյ կրցած էր խելք ընել աւագի պարկերը բամպակով լեցնել, բայց աշխարհին բեռը բաւական ծանր էր հայրիկիս ուսերուն վրայ:

Երկար ատենէ ի վեր կ'ընէր այս գործը՝ իր մանկութենէն ի վեր: Հակառակ մայրիկիս, հայրիկս կրկեսին մէջ մեծցած էր, եւ լաւ գիտէի, որ ինչ ալ ընէի, հայրիկս եւ կրկեսը իրարմէ չէի կրնար բաժնել:

Երբ պէխերը ոլորելով, աչքերուն մէջ չարաճճի փայլով մը կը նայէր մեզի, գիտէինք, որ կատակ մը պիտի յաջորդէր ասոր: Այո՛, հայրիկս կը սիրէր կատակներ ընել՝ գէշ կատակներ, հինցած կատակներ, խնդալիք կատակներ, նոյնիսկ իշու կատակներ... խտրութիւն չէր դնէր ասոնց միջեւ:

Անգամ մը, Փիային անկողինին գորտիկ մը դրած էր: Երբ կէս գիշերին գորտիկը քոյրիկիս գլուխը ցատկած եւ քոյրիկս ճիչ մը արձակած էր, հայրիկս խնդալէն մարած էր: Ուրիշ անգամ մըն ալ, ճերմակ սաւանով մը ուրուականի պէս ծպտուած, մայրիկս եւ զիս վախցուցած էր: Ահաւասիկ ասանկ բաներ: Որքան ալ աղաչէի, հայրիկս երբեք չէր կրնար լուրջ մէկը ըլլալ:

Բայց նաեւ զգացական, անմեղ եւ փափուկ սիրտով անձ մըն էր: Մրջինի մը անգամ վնաս չէր տար: Ինծի ծանօթ ամենէն բարեսիրտ անձը ան էր: Նաեւ ռոմանթիք էր: Այո՛, հայրիկս շատ ռոմանթիք մարդ մըն էր: